Հաստատում եմ՝
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

28.04.2017թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 25.04.2017թ.-ի թիվ 50 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունում իրականացվել է 2017թ.-ի 1-ին եռամսյակի գնումների գործընթացի համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ Վ.Կարապետյանի, ներքին աուդիտորներ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ա.Սարգսյանը /գնումների համակարգող/, քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ.Ասլանյանը, քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ Գ.Ղազարյանը /պատասխանատու ստորաբաժանման ղեկավարներ/:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/Գնումների համապատասխանությունը <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին.

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանը, Հ.Ավետիսյանը: ՈՒնեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ֆինանսական վերահսկողության և ներքին աուդիտորի փորձ:

<u>Վարչությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը:</u>

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել ◻ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ◻ ստանդարտը:

Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ գնումների գործընթացն իրականացվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին գնումների համապատասխանության աուդիտ:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում: Ընթացակարգի ծածկագիրը՝ ՎՁՄ ՇՀԱՇՁԲ-16/03: Շարունակական 2 չափաբաժնով համապատասխանաբար 43025000 դրամ և 43000000 դրամ, ընդհանուր գումարով՝ 86025000 դրամ: Նախահաշվային գինը կազմում է 86025000 դրամ: Գնումների արդյունքում կնքվել են գնման

պայմանագրեր Եղեգնաձորի ՃՇՇ ՓԲԸ-ի և Վայքի ՃՇՇ ՓԲԸ-ի հետ: Պայմանագրերի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 31.12.2017թ.-ը ներառյալ: Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե: Առկա են գնման ժամանակացույցերը, վճարման ժամանակացույցերը, տուժանքի մասին համաձայնագրերը:

Կատարողականի աուդիտ: Ֆինանսական պարտավորությունների կատարման և գնման ժամանակացույցի համաձայն իրականացվում է գնման կատարումը և ֆինանսավորումը: Պայմանագրային պարտավորությունների, գնման ժամանակացույցի և ֆինանսական պարտավորությունների շեղումներ չկան: Կատարվել է 54500.0 հազ.դրամի պայմանագրային պարտավորություն: Պայմանագրի գործողության ժամկետը 2017թ.-ի բյուջետային տարի:

Տնտեսական, սանիհիգենիկ և լվացման միջոցների ձեռք բերում /գնում/: Ընթացակարգի ծածկագիրը՝ ՎՁՄԲԸԱՀԱՊՁԲ 01/17:

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 23.01.2017թ.-ի թիվ 5 և 23.01.2017թ.-ի թիվ 6 հրամաններով ստեղծվել է ՎՁՄԲԸԱՀԱՊՁԲ 01/17 ծածկագրով պատասխանատու ստորաբաժանում /Գ.Ղազարյան/, գնումների համակարգող /Ա.Սարգսյան/, գնահատող հանձնաժողով: Ծանուցում է ներկայացվել մեկ մասնակցի: Հայտ է ներկայացրել մեկ մասնակից: 01.02.2017թ.-ի հանձնաժողովի հրավիրված նիստում, համաձայն ներկայացված գնային առաջարկի, ,,Եղեգնաձորի սպիտակ տուն'' ԱԿ-ին առաջարկվել է կնքել գնման պայմանագիր: Պայմանագրային գինը կազմում 378920 դրամ: Նշված գնմամբ տնտեսվել է 1380դրամ:

Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը: Պայմանագրի գործողության ժամկետը 2017թ.-ի բյուջետային տարի:

Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռք բերում/գնում/: Ընթացակարգի ծածկագիրը՝ ՎՁՄԲԸԱՀԾՁԲ-02/17:

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 23.01.2017թ.-ի թիվ 5 և 23.01.2017թ.-ի թիվ 7 հրամաններով ստեղծվել է ՎՁՄԲԸԱՀԾՁԲ-02/17 ծածկագրով պատասխանատու ստորաբաժանում /Գ.Ղազարյան/, գնահատող հանձնաժողով, համակարգող՝ Ա.Սարգսյան: Ծանուցում է ներկայացվել մեկ մասնակցի: Հայտ է ներկայացրել մեկ մասնակից: 04 .02.2017թ.-ի հանձնաժողովի հրավիրված նիստում, համաձայն ներկայացված գնային առաջարկի, ,,ԱՌՆԱՐ'' ՍՊԸ-ին առաջարկվել է կնքել գնման պայմանագիր: Պայմանագրային գինը կազմում է 280900 դրամ: Նախատեսվել է 281500 դրամ՝ տնտեսում 600 դրամ: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը:

Տրանսպորտային նյութերի ձեռք բերում /գնում/ Ընթացակարգի ծածկագիրը՝ ՎՁՄԲԸԱՊՁԲ-02/17 : Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 23.01.2017թ.-ի թիվ 6 հրամաններով և 01.02.2017թ.-ի թիվ 12 հրամանով ստեղծվել է ՎՁՄԲԸԱՀԱՊՁԲ-02/17 ծածկագրով տրանսպորտային նյութերի ձեռք բերման /գնման/ պատասխանատու ստորաբաժանում /Գ.Ղազարյան/, համակարգող և

գնահատող հանձնաժողով /համակարգող՝ Ա.Սարգսյան/: Ծանուցում է ներկայացվել մեկ մասնակցի: Հայտ է ներկայացրել <<Վիվեկա>> ՍՊԸ-ն: 14.02.2017թ.-ի հանձնաժողովի հրավիրված նիստում, համաձայն ներկայացված գնային առաջարկի, առաջարկվել է կնքել գնման պայմանագիր: Պայմանագրային գինը կազմում է 500000 դրամ: Տնտեսվել է 75000 դրամ: Առկա են գնման, վճարման ժամանակացույցերը, տեխնիկական բնութագրերը՝ հաստատված մատակարարի և պատվիրատուի կողմից, տուժանքի մասին համաձայնությունը: Պայմանագրի գործողության ժամկետը 2017թ.-ի բյուջետային տարի:

Եզրակացություն: Գնման գործընթացը համապատասխանում է <<Գնումների մասին>> << օրենսդրության պահանջներին:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան

Ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյան

Հ. Ավետիսյան

Գնումների համակարգողներ՝ Ա.Սարգսյան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարներ՝ Գ.Ղազարյան

Խ.Ասլանյան